

տեղ ձևերը ծաղկում են տար կողմերի ծաղիկները, և որ անկուած են օգտի կամ բուսականութեան համար. ջերմանոցին կարելի է նմանեցնել փայտեայ արկղիկը, որի մասին մենք վերը խօսեցանք: այս շինուածքի հարաւային ճակատը լինում է սպակուց և այս սպակեայ շրջանակից ներս են թափանցում լոյսը և ջերմութիւնը՝ որ այնքան կարեւոր են բոյսերի ծաղիկլուն:

Ապակին պահելով խաւար ճառագայթները թողնում է արեղակի լուսաւոր ջերմութիւնը, և որովհետև ջերմանոցից կարող է դուրս գալ միայն խաւար ջերմութիւնը, դորա համար սպակիններից արգելուած փոքր առ փոքր հաւաքվում է և ջերմանոցի ջերմութեան աստիճանը դառնում է չափազանց բարձր արտաքին օդի ջերմութիւնից: Աթէ մի կարգ սպակութիւնակ զրուի երկու, այն ժամանակ ջերմանոցի ջերմութեան աստիճանը աւելի շատ կբարձրանայ, որովհետև խաւար ջերմութեանը ևս աւելի դժուար կլինի դուրս գալ. բայց շատացնելով սպակինների կապը՝ ջերմանոցի ջերմութիւնը կարելի է հասուցանել չորացուցիչ վառարանի և կամ փայտեայ արկղիկի առաջնին. բայց այդ ժամանակ բոլոր բոյսերը կոչնչանային. այդպէս էլ կպատահէր և երկրի բոյսերին և կենդանիներին եթէ օդը բոլորովին չթողնէր խաւար ջերմութիւնը իւրեանից:

Այս բոլոր ասածներից զժուար չէ իմանալ՝ թէ ինչ մեծ նշանակութիւն ունի օդը երկրի զոյութեանց վերաբերութեամբ, և թէ արեղակի բարերար ներգործութիւնը նոցա համար կախուած է օդի երկու յատկութիւններից՝ այս ինքն թողնել իւրեանից բոլորովին ազատ լուսաւոր ջերմու-

թիւնը, և պահել բաւականաչափ խաւար ջերմութիւնը:

Թարգմանութիւն Ուսուցիչից.

Ն. Կ.

Աղետարար:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ա. Պ Ա. Գ Ա. Յ Ն.

Ժամանակները երեք են և նոցանից ամեն մէկը կարծես նշանակուած է մարդկային բնութեան մի որևիցէ սկզբունքի համար, այս ինքն սպառնին այն խելքի համար՝ որ աշխատում է թափանցել նորա մէջ, ներկան՝ մի որևիցէ Ֆիզիքական ըզզացման համար, իսկ անցեալը՝ սրտի համար:

Ատտարելութիւնը բառի բուն և իսկական նշանակութեամբ անհասանելի է մարդուն, բայց մենք պէտք է դիմենք դէպ ի նա, և Նախախնամութիւնը նորա համար մեզ անհասանելի նպատակ է տուել, որ մենք մեր բոլոր կեանքում յառաջ դիմենք:

Ի՞նչ բանում մենք աւելի սիրում ենք մեր բարեկամներին:

Աշխարհի մէջ մարդուն այնպէս են ընդունում, ինչպէս որ նա իւրեան ցոյց է տալիս. միայն հարկաւոր է միշտ իւրեան մի կերպով ցոյց տալ. ձանձրութեանը աւելի են համբերում քան ունայնութեանը:

Ուրիշների նախապատուութեանց դէմ չկայ ոչ մի ազատուելու հնարք քան սէրը:

Առհասարակ մարդկանցը առաւել վըտանգաւոր են համարում քան ինչ որ են. յիմարները և խոհմները հաւասար ան-

Ֆիաս են: վտանգաւոր են միայն կիսայիմար- ները և կիսաիմաստունները (իմաստակ- ները):

Մեծամեծ մարդիկը միշտ կապուած են լինում իւրեանց դարի հետ ընդհանուրի թուլութեամբ:

Մեր կրքերը նման են փիւնիկներին. հազիւ թէ այրուել էր հինը՝ որ ահա մոխ- րի տակից ծլում է նորը. խոստովանու- թիւնը այրում կրճատում է մեր կիրքը:

Ոչ մի բանի մէջ չափաւորութիւն այն- քան ցանկալի է՝ որքան անկեղծութեան և լուութեան մէջ նոցա հետ, որոնց մեք սիրում ենք:

Անչափութեան զաղափարը կարելի է անուանել բնածին զգացում. բանակա-

նութիւնը և երեակայութիւնը հազիւ հասանում են նորան, բայց սրտին նա յայտնի է. նորանում է ցանկութեանց յուսոյ և սիրոյ անչափութիւնը:

Միրեցեալ և սիրող մարդու մէջ եղած զանազանութիւնն այն է՝ որ մէկը կնոջ համար թողնում է իւր կեանքը, իսկ մի- սր իւրը նորան է տալիս:

Մեք հաճութեամբ դարձուցանում ենք մեր հայեացքը դէպ ի ապագան, այդ նորա համար է՝ որ մենք սիրում ենք նկատել մեր ցանկացածը նորա մութ պատկերնե- րում:

Ն. Կ.

ՅԱՆՆԱՆԻ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԿՈՒ ԱՂԱԻՆԻ

- Երկու աղանձի կապրէին սիրով .
- Բայց մէկուն սիրաբ տան նեղանալով ,
- Խեղքին փշեց որ հեռու երկիրներ
- Յանկարծ ձեռք զարնէ ճանապարհորդիլ .
- Միւսն ասաց իրեն. «Ի՞նչ կուզես ընել ,
- Մի՞թէ եղբօրէդ կուզես անջատուիլ .
- Չե՞ս զիտեր չարեաց վատն ու մեծազոյն
- Համարուած է դառն բացակայութիւն .
- Մի ըներ, անդութ, և լաւ մը խորհէ
- Ճամբու հոգ՝ վաստակ,
- Նեղութիւն, վտանգ,
- Եւ փոքր ինչ եռանդդ չափաւորէ:
- Ի՞նչ կրնես թէ որ այս վատ եղանակ
- Յանկարծ երկարի .
- Ինչո՞ւ կշտապես, զեփիւռն անուշակ
- Աւելայ կհասնի: